



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19242

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի հուլիսի 29-ի թիվ 92-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/72-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱԿՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Սիմոն Բաբայանի և Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Հակոբ Թադևոսյանին (արտոնագիր թիվ 1874) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Փաստաբան Գևորգ Հակոբյանը, (**այսուհետ՝ նաև Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ թիվ ԵԿԴ/1913/02/17 քաղաքացիական գործով ինքը ներկայացնում է հայցվոր Արմեն Աղաջանյանի շահերն ընդդեմ պատասխանող «HSBC» բանկի՝ աշխատանքային վեճով: Նույն գործով պատասխանողի ներկայացուցիչն է հանդիսանում փաստաբան Հակոբ Թադևոսյանը: Դիմողը նշել է, որ նշված գործով Հակոբ Թադևոսյանը ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող ակնհայտ սուտ տեղեկություններ, դատական նիստերի ընթացքում անընդհատ միջամտել է և խոչընդոտել է իր դիրքորոշումները ներկայացնելուն, իր գործողություններով ստեղծել է լարված մթնոլորտ, ինչի հետևանքով ինքը կոշտ արտահայտություններ է հնչեցրել պատասխանող կողմի գործողությունների նկատմամբ: Դիմողը նշել է նաև, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի էրեբունու նստավայրում 2019 սեպտեմբերի 25-ի դատական նիստի ժամանակ Հակոբ Թադևոսյանը անհարգալից է վերաբերվել և անհարգալից արտահայտություններ է թույլ տվել իր անձի նկատմամբ, սպառնացել է նիստից հետո «ռազբորկայով»

(նիստի ժամանակ հայտարարել է, որ դրսում կասի), բացի դրանից, նիստի ժամանակ, թիրախավորելով իր անձը և մասնագիտական պատրաստվածությունը, հայտարարել է, որ «ցավում է, որ կան նման փաստաբաններ», որ նման ձևով են վարում գործը:

Դիմողը հավելել է, որ նիստից հետո Հակոբ Թադևոսյանն իջել է ներքև, սպասել է մինչև ինքն էլ դուրս գա դատարանի շենքից, մոտեցել է իրեն, հրավիրել է խոսել շենքի հետևում: Դիմողը նրան առաջարկել է հարցերը պարզել մոտակա ոստիկանության բաժանմունքում, ինչին ի պատասխան՝ Հակոբ Թադևոսյանը սկսել է վիրավորական բառեր հնչեցնել իր հանդեպ (լակոտ և ճիճու), վառած ծխախոտը թափ է տվել իր դեմքին, ապտակել է, հետո հասցրել է ոտքով և ձեռքով հարվածներ իր աջ թևին (որով պաշտպանվում էր) և պատռել է պիջակը: Դեպքի առիթով հարուցվել է քրեական գործ, որով Դիմողը ներգրավվել է տուժող:

Դիմողը դիմումին կից էլեկտրոնային եղանակով ներկայացրել է համապատասխան քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը, ինչպես նաև դատական նիստերի ձայնագրությունները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 25.11.2019թ. թիվ 484-Ա/ԿԳ-19242 որոշմամբ փաստաբան Հակոբ Թադևոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք) 4.1 կետի (նույն կարգավորումը նախատեսված է Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Նոր կանոնագիրք) 4.1 ենթակետով), 5.1.2 (նույն կարգավորումը նախատեսված է Նոր կանոնագրքի 5.1.2 ենթակետով) և 5.2.1 (1) (նույն կարգավորումը նախատեսված է Նոր կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետով) ենթակետերի խախտման և «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների խախտման հատկանիշներով:**

29.11.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռիմա Մխիթարյանին **(այսուհետ նաև՝ Նախապատրաստող):**

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

25"12"2019 թվականին Դիմող Գևորգ Հակոբյանը կարգապահական գործը նախապատրաստողին ներկայացրել է բացատրություն, որով պնդել է Դիմումով իր հայտնածը:

Դիմողը խորհրդի նիստին չի ներկայացրել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Նիստին միացել է Պատասխանողը և հայտնել, որ Դիմողի պնդումները դատական նիստից հետո՝ դատարանի շենքից դուրս տեղի ունեցածի վերաբերյալ, իրականությանը չեն համապատասխանում: Վերջինս պնդել է, որ նիստից հետո ինքը մոտեցել է Պատասխանողին, փորձել է պարզաբանել նիստի ընթացքում տեղի ունեցածը, ինչին ի պատասխան Դիմողը վիրավորել է իրեն, այնուհետև մի քանի փոխադարձ վիրավորանքներից հետո, Դիմողը փորձել է հարվածել իրեն, սակայն չի հաջողվել, հաջորդիվ ինքն է հարվածել Դիմողին, այնուհետև վնասել է Դիմողի պիջակի թևքը, այնուհետև Դիմողը հարվածել է իրեն: Պատասխանողը պնդել է, որ Դիմողի հայտնած մնացյալ տեղեկությունները իրականությունից շատ հեռու են և զրպարտություն են հանդիսանում:

3.3 Վկաների ցուցումները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

14.01.2020թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

03.02.2020թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 29.07.2020թ. ժամը՝ 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- ԵԿԴ/1913/02/17 քաղաքացիական գործի շրջանակներում Դիմողը և Պատասխանողը ներկայացրել են իրենց վստահորդների՝ համապատասխանաբար հայցվոր և պատասխանող կողմերի շահերը: Սույն փաստը հաստատված է համարվում նիստի ձայնագրությունների էլեկտրոնային կրիչով, ինչպես նաև Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

- 2019 սեպտեմբերի 25-ի դատական նիստի ժամանակ Հակոբ Թադևոսյանը

հայտարարել է, որ «ցավում է, որ կան նման փաստաբաններ», որ նման ձևով են վարում գործը: Սույն փաստը հաստատված է համարվում նիստի ձայնագրությունները պարունակող էլեկտրոնային կրիչով:

- 2019 սեպտեմբերի 25-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի «Էրեբունի» նստավայրի վարչական շենքի դիմաց Հայկ Թադևոսյանը մեկ անգամ հարվածել և թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք է հասցրել Գևորգ Հակոբյանին, այդ թվում՝ Պատասխանողը բռնել է Դիմողի պիջակի թևքից, որը պատռվել է: Սույն փաստը հաստատված է համարվում 18"12"2019թ" քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ, ինչպես նաև Դիմումով և Պատասխանողի կողմից Խորհրդի 29.07.2020թ. նիստում տրված բացատրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Հակոբ Թադևոսյանի նկատմամբ 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել, բացառությամբ սույն կարգապահական գործի:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Փաստաբան Հակոբ Թադևոսյանը ենթակա է կարգապահական պարասխանարվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ կարգապահական վարույթը Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով ենթակա է կարճման:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 25.11.2019թ. թիվ 484-Ա/ԿԳ-19242 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել

- Դատական նիստում դատավարության մասնակիցներին անհարգալից վերաբերվելու,
- Փաստաբան Գևորգ Հակոբյանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավը արատավորող գործողություններ ու արտահայտություններ կատարելու և քաղաքավարի վերաբերմունք չցուցաբերելու վարքագիծը ստուգելու նպատակով:

➤ **Փաստաբանի կողմից Դիմողին անհարգալից վերաբերվելու, նրա նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավը արատավորող գործողություններ ու արտահայտություններ կատարելու և քաղաքավարի**

վերաբերմունք չցուցաբերելու և դրանով իսկ Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի խախտում թույլ տալու մասով.

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:*

Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի համաձայն՝ *փաստաբանը չպետք է՝ (1) թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:*

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի մեջբերված դրույթները բովանդակային առումով փոխկապակցված են, և փաստաբանի կողմից Կանոնագրքի 5.2.1 ենթակետի խախտումը որպես կանոն հանգեցնում է նաև 5.1.2 ենթակետի պահանջի խախտման: Հետևաբար Խորհուրդը նշված իրավադրույթների խախտման հարցը քննարկում է համակցության մեջ և անհրաժեշտ է համարում պարզել՝

- արդյո՞ք Պատասխանողը Դիմողի նկատմամբ թույլ է տվել այնպիսի գործողություններ կամ արտահայտություններ, որոնք արատավորում են փաստաբանի արժանապատվությունը և համբավը՝ այդպիսով Դիմողին չընդունելով որպես մասնագիտական աշխատակից և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք չցուցաբերելով նրա հանդեպ:

Կանոնագրքը հստակ սահմանել է փաստաբանների միջև շփման նվազագույն կանոնները՝ այն է քաղաքավարի և հարգանքը միմյանց արժանապատվությունը և փաստաբանի համբավի նկատմամբ:

Փաստաբանների, այդ թվում դատավարական հակառակորդ կողմերի շահերը ներկայացնող փաստաբանների կողմից մեկը մյուսի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորումը ուղղակիորեն առնչվում է փաստաբանության ինստիտուտի հեղինակության և փաստաբանի դերի հասարակական ընկալման հետ:

Այլ փաստաբանի նկատմամբ քաղաքավարի վերաբերմունքը և հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն և այն նվազագույն պահանջը, որը կիրառելի է փաստաբանների միջև հարաբերություններում, որը փաստաբանական էթիկայի հիմնաքարն է:

Սույն գործի շրջանակներում հաստատվել է Փաստաբանի կողմից Դիմողին հարվածելու հանգամանքը, ինչը որևէ կերպ չի կարող ներառվել «հարգալից վերաբերմունք» կատեգորիայի շրջանակներում:

Ավելին՝ իրենց վարքագծով փաստաբանները պետք է օրինակ ծառայեն այլ անձանց և նաև իրենց վստահորդների համար, իսկ իրավական կամ այլ վեճը ֆիզիկական քաջքոցի վերածելը հարիր չէ փաստաբանի բարձր կոչմանը:

Ինչ վերաբերում է Պատասխանողի այն փաստարկներին, թե Դիմողը իրեն վիրավորել է, այնուհետև մի քանի փոխադարձ վիրավորանքներից հետո փորձել է հարվածել իրեն, ապա սույն գործի շրջանակներում չի քննարկվում Դիմողի կողմից թույլ տրված այս կամ այն վարքագիծը, քանի որ համապատասխան դիմում Պատասխանողի կողմից չի ներկայացվել:

Վերոգրյալը հաշվի առնելով, արձանագրվում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի խախտում:

Նոր Կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:

Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերով սահմանված կանոնները (համապատասխան պարտականությունները) սահմանված են Նոր Կանոնագրքի համապատասխանաբար 5.1.2 և 5.2.1 ենթակետերով:

➤ **Փաստաբանի կողմից Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով**

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում **հարգանքով վերաբերվել** դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:* Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ (նույն կարգավորումը նախատեսված է Նոր Կանոնագրքի 4.1 կետով):

Դատարանի դահլիճում երկու փաստաբանների միջև վեճ է տեղի ունեցել, որը շարունակվել է դահլիճից դուրս: Նման պայմաններում, երբ Փաստաբանի արարքում հայտնաբերվել է Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի խախտում, Խորհուրդը գտնում է, որ դահլիճում տեղի ունեցած բանավեճն առանձին որակման ենթակա չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ Կանոնագրքի 4.1 կետով սահմանված կանոնի մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:* Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի*

կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ հաշվի է առնվում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Հակոբ Թադևոսյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 3-րդ մասի, և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով,

խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Հակոբ Թադևոսյանին (արտոնագիր թիվ 1874) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Հակոբ Թադևոսյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Փաստաբան Հակոբ Թադևոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 4.1 ենթակետի մասով կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Մելանյա Առուստամյան

29 հուլիսի 2020թ.
թիվ ԿԳ/72-Ա
ք. Երևան